

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

ՀՀ Լոռու մարզպետի ընդլայնված խորհրդակցության

15.01. 2020թ.

ք.Վանաձոր

Մասնակցում էին

Գ.Մարկոսյան	-մարզպետի տեղակալ
Ա.Մխիթարյան	-մարզպետարանի գլխավոր քարտուղար
Վ.Խաչատրյան	-գլխավոր քարտուղարի տեղակալ
Հ.Պապոյանը, Լ.Վարդանյանը, Ռ.Հարությունյանը, Ա.Ջանազյանը, Ժ.Ղազարյանը, Է.Հախվերդյանը, Ա.Շահվերդյանը, Լ.Բերոյանը, Ա.Սահակյանը, Ս.Ղուբաթյանը, Ա.Ադրյանը, Հ.Մկրտչյանը, Ն.Համբարձումյանը, Ա.Գասպարյանը	- ստորաբաժանումների ղեկավարներ և այլ պաշտոնատար անձինք
Լ.Ասլանյանը	-մարզպետի խորհրդական
Հ.Այվազյանը	-մարզպետի խորհրդական
Ռ.Խանզադյանը	-մարզպետի օգնական
Ն.Հովհաննիսյանը	-մարզպետի օգնական

Օրակարգում՝

1. Ընթացիկ աշխատանքների մասին:
/զեկ.՝ Գ.Մարկոսյան/
2. Քաղձառայության թափուր հաստիքների համար թեստային առաջադրանքների կազմում:
/զեկ.՝ Ա.Մխիթարյան/
3. Գործուղումների հաշվետվությունների մասին:
/զեկ.՝ Ա.Մխիթարյան/
4. 2019 թվականի սուբվենցիոն ծրագրերի (ասֆալտապատում) որակի լաբորատոր հետազոտությունների արդյունքների մասին:
/զեկ.՝ Ա.Ջանազյան/
5. 2020 թվականի սուբվենցիոն ծրագրերի նախապատրաստական աշխատանքների մասին:
/զեկ.՝ Ա.Ջանազյան/
6. Ճանապարհների ձմեռային սպասարկման մասին:
/զեկ.՝ Ա.Ջանազյան/
7. Համայնքներից համայնքապետի և ավագանու որոշումների մասին տեղեկատվություն ստանալու մեխանիզմների մասին՝ օտարվող հողերի մասով:
/զեկ.՝ Դ.Մանուչարյան/
8. Հողբաժնի ընթացիկ աշխատանքների մասին:
/զեկ.՝ Է.Հախվերդյան/
9. Երկրաշարժի հետևանքների վերացման (բնակարանաշինություն , ԲԳՎ-ներ) ընթացքի մասին:
/զեկ.՝ Լ.Ասլանյան/
10. Օլիմպիադաների ընթացքի և արդյունքների մասին:
/զեկ.՝ Ռ.Հարությունյան/

Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց

1. ՀՀ Լոռու մարզպետարանի ստորաբաժանումների ղեկավարներին՝

Մարզպետի կողմից տրված ժամկետային հանձնարարականների կատարումը պահել ուշադրության կենտրոնում և հաշվետվություն ներկայացնել գրավոր՝ սահմանված ժամկետներում՝ բացառելով ուշացումները:

2. ՀՀ Լոռու մարզպետարանի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Դ.Մանուչարյանին՝

Մարզի համայնքների ավագանու նիստերի օրակարգերը նախօրոք ներկայացնել մարզպետին;

3. ՀՀ Լոռու մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետ Ա.Ջանազյանին՝

Կազմակերպել քննարկումներ և հրավիրել խորհրդակցություն սուբվենցիոն և քաղաքաշինական ծրագրերով իրականացված աշխատանքների վերաբերյալ տարածաշրջանի համայնքների ղեկավարների, շինարարների և շահագրգիռ այլ կազմակերպությունների ներկայացուցիչների հետ և հայտնաբերված խախտումների վերաբերյալ ներկայացնել առաջարկություններ:

4. ՀՀ Լոռու մարզպետարանի հողաշինության և հողօգտագործման բաժնի պետի պաշտոնակատար Է.Հախվերդյանին՝

Յուրաքանչյուր ուրբաթ ներկայացնել տեղեկատվություն և հաշվետվություն շաբաթվա ընթացքում բաժնի կողմից կատարած աշխատանքների վերաբերյալ:

 Invalid signature

X 

ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

ԼՈՐՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

Արձ. Ս.Մակարյան
Հեռ. 0322 /4-32-99/